

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարադպրակները գրվում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւարանիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն: Նամակ վաղաքա-
պատից: Ներքին լուրեր: ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: «Голосъ» քաղաքի թղթակցութիւնը:
Արտաքին լուրեր: ՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ: ՀՆՈՒԱԳԻՐ-
ՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ: Խառնայի Մէլերովիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՔԱԿԱՍԻՑ

Մայիսի 18-ին

Հանապարհորդութեան գլխավոր նպատակը լի-
նելով տեսնել սուրբ մեծ ունի օրհնութիւնը՝ ու-
րիշ բաներով շատ էլի գրադրում: Գուցէ սա լինի
պատճառ, եթէ նամակս մի փոքր չոր ու ցամաք
է: Սկսում եմ Աղտոտաֆայից: Խառնայի մինչև
Աղտոտաֆայ ընթացիկում են միայն թուրքեր, որոնց
մէջ էլ երևում կենդանութեան ոչ մի նշան: Նը-
րանց անքն հողի մէջ են և դաշտաբայրը անտէր:
Ամառը նրանք գնում են սարերը, իսկ աները
թողնում անտէր: Նրանք այնքան կայք էլ չու-
նեն որ չը կարողանան հետները մանածել: Մեր
գնալու ժամանակ նրանց քօշը սկսված էր, ուս-
տի անհապաքն էր ծանապարհով անցնել: Ամբողջ
գերդաստանը՝ սայլերով, ձիերով և էշերով քօշ-
վում էր սարը: Ի հարկէ այն սարերում նրանց
պարագանքը կը լինի խեղճ հայերին հարստա-
հարկ, գոյնալ գրատոր: Աղտոտաֆայի մտանք
Քարալանսարայ հայաբնակ գիւղը, որի բնակիչ-
ների թիւը հասնում է 100—120. գիւղի միջով
անցնում է Զարիսէթ փոքրիկ գետակը, գիւղը եր-

կու մաս բաժանելով: Գետակը գտնւած է իր փիշ-
կով: Գիւղը հարուստ է այգիներով, ունի և
անտառ: Խառնայի թիւը աներից չափ է:
Փողոցը հարթ տեղի վրա է, իսկ աները ծուռը:
Սրա ուղղութեամբ գտնվում է Զարիսէթ փոքրիկ
հայաբնակ գիւղը մի գետիկայի վրա: Այստեղ
ոչինչ մի աչքի ընկնող բան չէր երևում: Հանա-
պարհի վրա գտնվում է Գիւլիան հայոց գիւղը,
իւր հիմնալի ճովիտով: Բացի հայերից այստեղ
ընտանիքում են ռուսներ և մալականներ: Հայերը
ձորի մէջ ունեն մի եկեղեցի մի անկիւրթ քահա-
նայով. եկեղեցին այնքան կեղտոտ է պահված,
որ ամեն մի սուրբ անօթի թողի վրա կարելի է
մատով գրել: Հայերի թիւը 80 տուն է: Գիւղի
մէջ ծանապարհի վրա գտնվում է երկակնեան
սառը աղբիւր: Մարիւթից թափերանցի չինած: Այս-
տեղ մշտական ջուրը կայ, մինչև 3,000 մարդ:
Տները չինած են անկանոն, բայց կան և եւրօպա-
կան ճաշակով: Բոլոր խառնութիւնը, մինչև 60,
պատկանում են հայերին: Այստեղի հայերը շատ
անհիւրասէր են և դաւաճէր: Օտար հիւրից սե-
նեակի վարձ պահանջում են 3 ռ., կարծես
«Գրանտ Հօտէլ» լինի: Կայ անտառ և ունեն վա-
րելահող, բայց բնակիչների կէսին էլ չէ բաւա-
կանանում: Հիմնալի է և Գիւլիանի սարի կոմա-
նը (ղիւրդաղ): Մէլեմօսկայ, էլեմօկայ, Ալտոտ-
ա և Սուխայ օջոտան գիւղերը պատկանում են մա-
լականներին. թէև Սխտայ գիւղում խառն բնակ-
վում են հայեր: Մալականները ապրում են ամեն
այս գիւղերում շատ կեղտոտ, աները, բազրը,
փողոցները անտանելի են իրանց գարշելի միադ-
մով: Սրանց վառելիքը աթարն է—գրաստի աղբը:
Այստեղի բնակիչները շատ անհիւրասէր են,
խորշող ուրիշ քրիստոնեաներից: Սիրում են ու-

րիշ քրիստոնեաների հետ վիճել հաւատի վրա:
Նրանք աւետարանը հետները ման են ածում և
վիճարանութեան ժամանակ բաց են անում հար-
կաւոր տեղերը: Սուխայ-Օջոտան գիւղում բոլոր
բովին ջուր չը կայ: Վիւրջո ջուրը այդտեղ արժէ
10 կոպէկ: Էլեմօկայ Սխտայ լճի ափին է, ուս-
տի բնակիչների մեծ մասը պարագաւ է ձկնոր-
սութեամբ: Սխտայ լճի ափին գտնվում է նմա-
նապէս Չիւրուխու և Յամաքաբեղ հայոց գիւղե-
րը: Նրանց պարագանքը վարուցանք և ձկնորսու-
թիւն է: Սխտայ լիճը գտնւած է գեղարքունի, իշ-
խան, բալտակ, կապույտ և ուրիշ 15 տեսակ ձրե-
րով: Յամաքաբեղը Սխտայ վանքի կալուածք
է: Այս տեղերում չը կան ոչ ծառեր և ոչ այգի-
ներ: Չուրը բունում են թուով—ուռկանով նա-
ւակներէ: Չիւրուխու լիճը կայ միայն յաջող
է լինում, որ մի թու քարշէլիս դուրս են բե-
րում 1,000 աւելի ձկներ: Մեր վանքապատկան
նաւակով մտանք Սխտայ վանքը: Այնտեղ տիրա-
պետում է կատարեալ միակշիւթիւն: Վանապ-
րիւր թուով երեք էին: Նրանք շատ սիրով ընդու-
նեցին մեզ: Այնտեղ կար մի ծերունի պատգամ
քահանայ, կարծես նա թիֆլիսի սուրբ Նշան և
կեղեցու Տէր-Յովհաննէսն է: Նա շատ տխուր էր
և հիւսկնող: Արեւմտեան միջին պատմեց, որ
այս մի քանի օր է, այդտեղ նաւակով մտել են
մալականներ և գաղտնի կտրել են սուրբ Աստու-
ածանի և մանուկ Քրիստոսի պատկերների պա-
րանոցները: Այն պատկերը ևս ինքս տեսայ: Արե-
ւմտեան բողոքէկ են: Սխտայ վանքի բոլոր բնա-
կարանների մէջ, սեղանատնից սկսած մինչև նշա-
րանը անտանելի ծանր օդ էր: Ուղիղ որ ճգնաւոր-
ների տեղ է:

Այդտեղից գնացին Երևան: Մի օր մնալով
անգլին խառնիճաղանք բաղնիքիւն, արշաւում է
ղէպի Ղարաբաղի կողմերը (1757): Մէլեթ-Աթմար
և Մէլեթ-Խաւուրը իրանց զօրքերով միանում են
նրա հետ: Ասկարանի աւերակների *) մօտ բա-
նակ է գրվում: Հայոց մէլեթները մատակարարում
են իրանց դաշնակից հիւրերի բոլոր պաշարեղէն-
ները:
Այդ միջոցին Փանահ-խանը նոյնպէս անգործ
է մնում: Նա ամբարշտում է իր բերդը Շուշին, օդ-
նութեան է կանչում իր երկու հաւատարմիներին՝
Մէլեթ-Շահնազարին և Մէլեթ-Միրզախանին, ու-
րանք իրանց ուժերով միանում են նրա հետ:
Հակառակաբող կատարվում է Գարդար գետի
ափերի մօտ, Ասկարանի աւերակներից փոքր ինչ
հեռու: Փանահ-խանի զօրքերը շարդվում են և
ինքը փախչում է դէպի Պարսկաստան: Բայց եր-
կու քաջեր՝ Գալի-Մահմադը (Աւազ վարդապետը)
և Թիւր-Արքունանքը, փախստականին խուզարի-
րին կամուրջից *) բռնելով, յետ են բերում:
Մէլեթ-Շահնազարը յաղթվելուց յետոյ փախ-
չում է և ամրանում իր Աւետարանոց բերդում:
Մէլեթ-Միրզախանը էլ նրա մօտ ապաստան է
գտնում: Այդ միջոցին հայոց և վրաց միացած ու-
ժերը պաշարում են Աւետարանոց բերդը, և մի
քանի օրվայ ընդդիմադրութիւնից յետոյ, դաւաճում
են նրան: Մէլեթ-Շահնազարը և Մէլեթ-Միրզախա-
նը գերի են ընկնում: Աւետարանոց բերդը աւե-
րակ է դառնում, այդ երկու մէլեթների և Փանահ-
խանի երկրները բոլորովին աւարի են առնում,
հրդեհում են և ամեն ինչ ոչնչացնում են:
Այդ բոլորից յետոյ Թէյմուրազը յիշեալ երկր-
ները իշխանութիւնը առնով Մէլեթ-Աթմարին և
Մէլեթ-Խաւուրին, կամենում է վերադառնալ դէպի
Վրաստան, Փանահ-խանին, Մէլեթ-Շահնազարին և
Մէլեթ-Միրզախանին իր հետ տանելով օրպէս գե-
րիներ: Բայց հայոց դաշնակից մէլեթները, Թէյմու-
րազի հետ սկզբից դրած պայմանի համեմատ,
պահանջում են, որ Փանահ-խանին և յիշեալ եր-
կու մէլեթներին իրանց ձեռքը տայ, որպէս կա-
մենան, այնպէս վարվին նրանց հետ, իսկ ինքը
պէտք է բաւականանայ միայն պատերազմական
աւարով: Թէյմուրազը կամենում է նոյն խաբէու-
թիւնը գործ դնել իր դաշնակիցների հետ, ինչ
խաբէութիւն որ գործ դրեց օշլար Ֆաթալի-խա-
նը: Նա բացարձակ կերպով չէ մեղքում Մէլեթ-
Աթմարի և Մէլեթ-Խաւուրի պահանջը, բայց զանա-
պան պատրաստներով յետաձգում է, մինչև իր
զօրքերի և զինքների հետ դուրս է գալիս Ղարա-
բաղի սահմաններից:

Մէլեթ-Աթմար և Մէլեթ-Խաւուրը հակառակում են,
որ վրաց ընչաքանց իշխանը դաւաճութիւն ունի
մեծագուտար փրկանք ընդունել Փանահ-խանից և
նրա երկու մէլեթներից և այնուհետև նրանց բաց
թողնել: Այդ առիթ է տալիս ստատիկ հակառա-
կութեան, հայ և վրաց դաշնակցութիւնը քանդ-
վում է, և Մէլեթ-Աթմար ու Մէլեթ-Խաւուրը վի-
րաւորված բաժանվում են Թէյմուրազից:
Բայց Մէլեթ-Աթմար և Մէլեթ-Խաւուրը այն տե-
սակ մարդիկներից էին, որ չէին կարող անպա-
տիժ թողնել խաբէութիւն: Նրանք իսկուս դիմում
են Շիրվանի հաւաքավարի Զալի-Չէլէի *) անունով
*) Զալի-Չէլէին ծագումով հայ էր: Տասն և
հօթերորդ դարու վերջերում, Շիրվանի Ղարալա
կոչված գաւառի Սողոմբու գիւղում բնակվում էր
Բարսեղ անունով մի քահանայ, որին թիւրքերը
կոչում էին «զարա-բէլի» (սե քահանայ): Դա
զաղթական էր Ղարաբաղի իսկուս գաւառից և
տեղային մէլեթների տոհմից էր: «Սե քահանայ»
իշխանական փառասիրութիւն ունէր, զիմեց Սպա-
հան պաքսից շահից մէլեթութեան ֆիրման ստա-
ցաւ: Բայց նա ունէր մի հակառակորդ Մէլեթ-
Մուհամմէտ անունով Ղարալա գաւառի Ղար-
թաշին գիւղում, որը թոյլ չը տուց չսե քահանա-
յի ստացած ֆիրմանը գործ դրել: Այդ Մէլեթ-
Մուհամմէտը, ինչպէս երևում է, նոյնպէս հայոց
ծագումից էր, բայց մահմադականութիւն ընդու-
նած: «Սե քահանայ» նոյնպէս ընդունում է մահ-
մադականութիւն, որ կարողանայ իր ֆիրմանը գործ
դնել: Բայց հակառակորդը աւելի զօրաւոր է ի-
նում և քահանայի կրօնասիրութիւնը անցնում է
ապարդիւն: Սե քահանայի օրդին էր Ղարա-
ղաբանալին, որը մի հասարակ մասովաճառ էր:
Իսկ այդ հասարակ մասովաճառը ծնվեցաւ Զալի-
Չէլէին, որը Շիրվանի զօրաւոր խաների նախա-
նային եղաւ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻԿՈՒԹԻՒՆՆԵՐ

XIII.

Հայոց դաշնակից մէլեթները նկատելին, որ
Փանահ-խանին իսպառ ոչնչացնելու համար, և
նրա կողմնակից երկու հայ մէլեթներին (Մէլեթ-
Շահնազարին և Մէլեթ-Միրզախանին), պատժելու
համար պէտք էր արտաքին ուժերից ևս օգուտ
քաղել:
Երբ Պարսկաստանից եկաւ Ղարաբաղի կողմե-
րը ուրվեցի օշլար Ֆաթալի-խանը (1761) Գիւ-
լիստանի Մէլեթ-Խաւուրը և Ջրաբերդի Մէլեթ-Ա-
թմարը միացան նրա հետ: Այդ Ֆաթալի-խանը
Նադիր-շահի սիրելի և քաջ զօրապետներից մէկն
էր *): Շահի մահից յետոյ, Պարսկաստանում
յուզբած խառնութիւնների ժամանակ, Ֆաթալի-
խանը արի ուժով հնազանդացրեց ամբողջ Ատր-
պատականը, յետոյ արշաւեց դէպի Ղարաբաղի
կողմերը: Միանալով հայոց մէլեթների հետ, նա
պաշարեց Շուշի բերդը: Փանահ-խանը և Մէլեթ-
Շահնազարը առժամանակ կարողացան քաջու-
թեամբ պաշտպանվել, բայց յետոյ անձաբացած,
ստիպված եղան անձաբաւար լինել: Ֆաթալի-խա-
նը մեղանչեց այն պայմանի դէմ, որ դրել էր ի-
րան օգնող երկու մէլեթներին՝ Աթմարի և Խաւուրի
հետ: Այդ պայմանը կայանում էր նրանում, որ
Ֆաթալի-խանը պիտի բաւականաւոր միայն Շու-
շի բերդի կողմնակալ լի, իսկ Փանահ-խանին պիտի
յանձնէր Մէլեթ-Աթմարի և Մէլեթ-Խաւուրի ձեռքը,
որպէս կամենային, այնպէս վարվէին նրա հետ:
Բայց նա ստանալով Փանահ-խանից տասն հազար
թուման փող, և նրա օրդի երկուստարդ իւրբանի-

*) Դա մի և նոյն օշլար (ցեղի անուն է) Ֆա-
թալի-խանն է, որ Ֆաթալի վանքը կողմնակալ
(1762) մի մասը աւերակ դարձրեց և Ֆաթալի վա-
նահայր Յովհաննէս կաթողիկոսին սպանել տուց:

*) Ասկարանի աւերակները Շուշի բերդից մօ-
տաւորապէս 30 վերստ հաղիւ հեռաւորութիւն
ունեն:

*) Նրանք գետի վրա:

կերպարի մեծությունը օրը ոչ ոքին չօգնեցին: Ուստի ժողովրդի եռանդը և վերաբերմունքը Թեմայի ծառայողների հասան, որ նրանք չէին զգում ոչ ոստիկանների և ոչ կազմակերպիչների հարուստները: Ոստիկանները շատ անգամ ուղղակի դեմքին էին խփում մարմնով: Այսին շատ ծառայողներ ևս, որ անհավատարմորեն, որոշակի անհավատարմորեն էին իրանց օտոմակներով, իսկ օտոմակ չունեցողը կոխում էր ոստիկանի կամ դիտարկի ձեռքը 20 կոպեկանոց և աղաւթ մուտք ունէր: Բայց մէկից թող տուածը միւսին հարուստ էր ստանում, մինչև նա էլ իր ստանալը իր բաժնի մի 20 կոպեկէ: Այդ օր ոստիկաններից մի քանիսն էին արդիւնքը կը համեմատէր 200 ռ. գումարի: Մեծին օրհնութեան օրը ոստիկանները տաճարի բնինց վայր էին չարտուում կանանց, իսկ եթէ կը տայր փող կարող էր բարձրանալ: 16-ին պատարագին էր ծերունի նորինծայ 3-րդ հասնես եպիսկոպոսը: Երբ պատարագի ժամերը թիւնը հասաւ «Քրիստոս մեր մէջ յայտնեցաւ» տեղին, եկաւ «Երկուրդիւր» 12 զինուորական եպիսկոպոսներով և բարձրագաւ բնից բազմաթիւ դահլիճ: Իսկոյն սկսեցաւ մեծ-օրհնութիւնը: Այդ օրհնութիւնը և աւետարաններ կարդային եպիսկոպոսներ, իսկ երգում էին ձեռ. աշակերտները: Յետոյ վեհ. կաթողիկոսը մեծին կաթայի մէջ թողնելով սրբոց մասունքները, կենաց փայտը և զեղարքը օրհնեց մեծինը: Մանկունի եպիսկոպոսը, կանգնած վեհափառի մօտ, իր սուր, և հրամայեց իր հայացքով կառավարում էր եպիսկոպոսների խումբը: Նա էր կարգադրում ամեն բանը: Մեծին-օրհնութիւնը շատ վերջացաւ և կաթողիկոսը եպիսկոպոսներով դիմեց վեհարանը: Այնուհետեւ տաճարի մէջ տիրեց կատարեալ բարեկենսական խառնակութիւն: Եւ ոչ պատարագ խմացվեցաւ և ոչ ժամերգութիւն: Ամեն միւր աշխատում էր շուտով մերձենալ միւսին առ կաթային և համբուրելով նրան առնել իր փառքը: Պատարագը մնաց կիսատ: Ժողովուրդը այնպիսի տաքութեամբ մէջ էր, որ կարծես ծովի ալիքոծութիւն լինէր: Երկու երեսները և մի մարդ խառնեցան ծածկելով ոտների տակ տրորեցան, մեծին: Իսկ թուրքացիների թիւ չէր կար: Ասեղ գցելու տեղ չէր կար: Ճեմ. երգիչ աշակերտները աղաւթներով էին դնում մարդկանց գլխերի վրա զրորելով: Ամենքը աղաղակներ էին բարձ-

րացնում, շատերը զրորում էին մինչև եկեղեցու դուռը: Թուրքացիներին ուղի էին բերում տառուցով: Ամբողջ տաճարը տառուցով լինէր: Այդ օրուայ պէս իրարանցում երբէք չեմ տեսել: Ամեն միւր պատրաստ էր նաճատակվել: Այդպիսի բարբարոսութիւն և ֆանատիկոսութիւն ոչ մի տեղ երբէք տեսած չէի: Ես բազմաթիւ և համարում ինձ, մի հնարքով կը գտնեմ տաճարից դուռը գալու: Միւս օրը 17-ին մի և նոյն բազմութիւն և մի և նոյն անկարգութիւն: Մեծին ժամացադրամը պահպանել էր 16-ին մի եպիսկոպոս, իսկ 17-ին ինքն Մանկունին: 17-ին երկուրդին, Մանկունին ամբողջ դրամը հաւաքեց և տարաւ, թէ ուր տարաւ, այդ չէր գիտեմ: Այդ օրերում ժամացադրամը կարծես կը համեմատէր 20,000 ռուբլ գումարի: Երեկոյան 16-ին տաճարի դռները հրադարձեց էր: Ամեն էր մոռցելը և երգում էին աշակերտներ: Բակները թէն շատ վատ էին, բայց ամեն մի բարձրանալու վրա աշակերտը զրորեց էր ամբողջ մէջ: Չանդակաւոր չորջր չէրան էր վերջին: Արեւմտեան կողմը դրված էր՝ Վեցեց վեհ. Գեորգի. կաթողիկոս ամենայն հայոց: Հիւսիսային կողմը՝ Հայոց հաւատ, հայոց տուն, կեցեց յաւատ Հայաստան: Հարաւային կողմը չէր կարողացաւ կարգաւ. որովհետեւ շատ վատ էր դրված և լուստարված:

Երեւանի գործի կամանդիրը և մի օֆիցեր տաքան կաթողիկոսին մի մի եպիսկոպոսական թանկարէն մատանի էլ միմեծին թանկարանից, ինչպէս շնորհակալութեամբ: Եւ միմեծին պարծանքը կարող է լինել հարուստ գրադարանը իր անթիւ հին ձեռագիրներով: Հիւսիսային Ներսէս Գ. չէրան լինել և անտառը: 13-ի մէջ կան մանր, բայց շատ ճշգրտի: Մայիսի 17-ին ձեռնարանից անդադրեցաւ մի տաճարանացի աշակերտ: Նրան օրհնեցին մինչև երեկոյ, բայց չէր գտնու:

Չանից այն առարկաների ցուցակը, որ ուղարկել է կաթողիկոսն ուսումնարանական շրջանի վարչութիւնը Մոսկվայում բացված ընդհանուր ուսուցանողներ: Առարկաների մէջ կան ուսուցիչ, վրացերէն, հայերէն և թուրքերէն լեզուներով հրատարակված դասագրքեր և մանկական ընթերցանութեան գրքեր, որոնք կամ յօրինվել կամ թարգմանվել են կաթողիկոսական վարժապետների ձեռքով: Հայոց գրքերի ընտրութիւնը շատ պահապան է: ամենալաւ գրքեր որոնք գրվել կամ թարգմանվել են վերջին ժամանակները հայերէն լեզուով, չէր կան ցուցակի մէջ: Բայց սորանից, վերջին ժամանակ հայերը հրատարակել են իրանց լեզուով մանկական խաղեր, լուծումներ և այլն. այդ բոլորը բացակայ է այն առարկաների թւում, որոնք ուղարկվեցան Մոսկվայի հանդէսը: Միթէ ուսումնարանական շրջանը չէր կարող նախ դիմել հայոց հասարակութեանը մի յայտարարութեամբ, որպէս զի ուղարկվեց նրան վերջին ժամանակ հրատարակված ամեն տեսակ հայերէն դասագրքեր, մանկական և ընթերցանութեան գրքեր, խաղեր և այլն:

ՀԻՆՆԱԹԻՋՆԻՍՆԻՑ մեզ դուռն են: Մեր վերջապահ յաջող, հայր Գառնակերանայ այս օրերս հրաւերով էլ միմեծին կանգնեցաւ և ահա երկու շաբաթ է ինչ բացակայ է քաղաքից: Ասում են հայր սուրբը եպիսկոպոս է ձեռնադրվելու:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ГОЛОСЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԸ

Բերլինից „Голосъ“ լրագրին գրում են: Հեռեւեալ մայիսի 24-ից: Օրերուս կատարվեցաւ Ալբերտ Գոն-Գրեթի արձանի բացումը: Այդ ահագին հանդէսը մի որ և է շրջանի ընտանեկան գործ չէր: Եթէ գերմանական դիտութիւնը այդ անգամ պատուում էր իր երեւելի ներկայացուցիչներից մէկին, Բերլինն էլ իր կողմից շատ պուճ էր յայտնել իր յարգանքը Գրեթին իբրեւ մարդու և իբրեւ հասարակական գործիչին: Բեր-

լինի հասարակութեան զգացմունքները Գրեթի մասին հասկանալու համար պէտք է խմանալ որ հանգուցեալի թէ գիտական և թէ գործնական աշխատանքները զիստաւորապէս Բերլինի մէջ են կատարվել: Երախտագէտ քաղաքը զարդարեց այն տունը, որտեղ բնակվում և աշխատում էր Գրեթէ հեռեւեալ կարճ, բայց ճարտասաւիտս գրուածքով: „այստեղ աշխատում էր Գրեթէ“:

Գրեթէ վախճանվեցաւ Փրանս-դերմանական պատերազմի սկզբում: Պատերազմի վերջանալուց մի տարի յետոյ Բերլինի բժշկական ընկերութեան մէջ, որին Գրեթէ նախագահում էր, միտք ծագեցաւ հանգուցեալին արձան կանգնեցնելու մասին: Այդ գործի իրագործման համար սկսված շարժումը միջազգային բնագործիւն ստացաւ: Գերմանական կայսերական ընտանիքը և հանգուցեալ Ալեքսանդր II կայսրը մասնակցեցին այդ գործին:

Արձանի բացման օրը Բերլինի համալսարանի դահլիճի մէջ հաւաքվեցաւ Բերլինի ամբողջ ինտելիգենտ հասարակութիւնը. այնտեղ էին պրօֆեսորներ, պատգամաւորների ժողովի անդամներ, քաղաքային վարչութեան ներկայացուցիչներ, զորոներ, կանայք, ուսանողական ընկերութիւնների ներկայացուցիչներ և այլն:

Ծաղիկներով ծածկված մի բարձրաւանդակի վրա դրված էր Գրեթէի կիսարձանը: Նրա երկու կողմից կանգնած էր համալսարանի բժշկական բաժինը: Երբ դահլիճի մէջ երեւաց Հելմհոլց, հասարակութիւնը նրան չափազանց յարգանք ցոյց տուեց: Այդ աօնախմբութեան ներկայ էին և օտար գիտնականներ, ինչպէս Տերունի Ալբ. Գրեթէի նախկին ուսուցիչը և երեւելի ֆիզիոլոգ Գոնդերս: Գրեթէի յաջորդը՝ Շվեյցեր մի երկար ճառ արտասանեց, որ նուրբում էր հանգուցեալի յիշատակին և որ նրա գոր-

խանին և առաջարկում են նրան իրանց դաշնակցութիւնը, միանալու միասին վրաց իշխանի դէմ: Այդ Հալի-Չէլէրին հաշտ էր հայոց մէկըների հետ. մենք տեսանք, դեռ մի քանի տարի առաջ նա միացաւ Մէլիք-Աթաբեկ և Մէլիք-Իսուրիի հետ և միասին բանդեցին ֆանատիկանի Ասկարան ահաւորութիւնը: Բայց նա սատակի ատելութիւն ունէր դէպի վրացիները այդ պատճառով սիրով ընդունեց Մէլիք-Աթաբեկ և Մէլիք-Իսուրիի առաջարկութիւնը:

Մինչև Հալի-Չէլէրիի կուր գետը անցնելը, մինչև հայոց երկու մէկըների հետ միանալը, կատարվեցաւ մի այլ անցք: Վրաց իշխան Թէյմուրազը Գանձակի մօտից անցկանալու ժամանակ, նրա գործերը կողպատում էին ճանապարհի վրա պատահած դեղերը: Նրա առաջը դուրս եկաւ տեղային իշխան Գանձակ-խանը, երկուսի մէջ սաստիկ կռիւ ծագեց: Գանձակ-խանը գերի բռնեց Գրեթէին: Այդ միջոցին վրա հասաւ Հալի-Չէլէրին հայոց երկու մէկըների հետ: Մի թեթեւ ճակատամարտից յետոյ, որ կատարվեցաւ Դէյլի-Նեղամի կողմէ տեղում, վրացիները յաղթվեցան, և թողնելով իրանց փորձառեալ ընդդէմ աւարը, սկսեցին փախչել դէպի Թիֆլիս: Հայոց և Հալի-Չէլէրիի գործերը հետամուտ եղան, հաղթեցին նրան մինչև Ալեքսանդր, անցան Գաղաթի և Գանձակի գաւառները, և ամեն տեղ թաղանթով, յետ դարձան:

Բայց այն, ինչ որ հայոց մէկըների ամենագլխաւոր ցանկութիւնն էր, դժբախտաբար չէր կատարվեցաւ: Նրանք չէր կարողացան ձեռք ձգել ոչ ֆանատիկանին, ոչ Մէլիք-Գանձակին և ոչ էլ Մէլիք-Միրզախանին: Որովհետեւ մինչև նրանց հասնելը, Թէյմուրազը յիշեալ գերիներից մեծ գումար ստանալով, բաց էր թողել: Հայոց մէկըները կարողացան ազատել միայն Գանձակի Գանձակ-Բերդի-խանին, և այդ երախտը ապագայում մեծ օգուտ ունեցաւ, որովհետեւ, որպէս պիտի տեսնենք յետոյ, Գանձակի խաների և հայոց մէկըների մէջ կազմվեցաւ սերտ բարեկամական յարաբերութիւն: Գանձակի բերդը դարձաւ հայոց մէկըների ենթանց ժառանգների ապանով ապաստարան.

ամեն մի տաղանթի և զօրաւորի դէպքերի ժամանակ այստեղ էին պատուարւում:

Գանձակի Գանձակ-խանը (XIV դարի վերջերս), պատճառներից, վաղուց արդէն երախտագարտ էր Մէլիք-Աթաբեկի և նրա լաւ բարեկամը: Երբ Գանձակ-խանի հայրը մեռաւ, նրա եղբայրը, Մամադ-խանը, կամենում էր սպանել նրան Գանձակի խանութիւնը գրաւելու համար: Այդ միջոցին Գանձակ-խանը փախաւ Զաքարէի Մէլիք-Աթաբեկի մօտ և իր կիսանքը ապաստեց: Յետոյ Մէլիք-Աթաբեկը հայոց գործերով նրան տարաւ Գանձակ, և Մամադ-խանին խեղդել տալով, Գանձակ-խանին հաստատեց իր հօր իշխանութեան մէջ: Այդ օգնութիւնը չէր մոռացաւ Գանձակ-խանը, չէր մոռացաւ և նրա որդի Զաքարէ-խանը Մէլիք-Աթաբեկի ժառանգ Մէլիք-Մէլիքովի վերաբերութեամբ, որպէս պիտի տեսնենք մեր պատմութեան ընթացքում:

Իսկ Մէլիք-Իսուրի, որպէս մեր ընթերցողին յայտնի է, մօր կողմից տոնակից էր Գանձակ-խանին: Մէլիք-Իսուրիի մայրը, Գանձակ-Սոլթանը, Գանձակ-խանի եղբոր աղջիկն էր, քրիստոնէութիւն ընդունած: Նրա պատմութիւնը յիշեցնել մեր յօդուածի սկզբներում:

Թէյմուրազի հետ ունեցած պատերազմներից յետոյ, Մէլիք-Աթաբեկ և Մէլիք-Իսուրի, առաջնական մնացին Գանձակում: Գանձակ-խանը նրանց հիւրասիրեց իր մօտ: Գանձակ-խանը բարեկամ մարդ էր, որպէս առաջատար կեղեկ և Գանձակի խաները: Նա ծագումով թիւրք էր, այլ պարսիկ էր. պարսիկները համաձայնաբար սուլի բարի են եղել դէպի քրիստոնէականները, քան թէ վրացիներ, մանդոլական թիւրքերը: Իր սահմանակից և հեռաւոր խաների մէջ (որպէս էին Գալի, Շիրվանի, Գեւորդի, Բաղդի, Բաղդի և այլ խաները) Գանձակ-խանը աւելի բարձր դիրք ունէր և ձայն. նա պարսից կատարված խանից ճանաչված էր որպէս բեղերբեղի, այսինքն իշխանների իշխան:

Գանձակ-խանը կամեցաւ հայտնեցնել Մէլիք-Ա-

թաբեկի և Մէլիք-Իսուրիի ֆանատիկանի հետ: Փանախալ անընդհատ պատերազմները, որոնք այնքան արեւան և դժբախտութիւնների պատճառ դարձան, մաշել էին երկու կողմերի ունեւն: Ժողովուրդը բոլորովին ձանձրացել էր չարուստակ կռիւներից, հանդարտապէս էր ուղւում: Այդ էր պատճառը, որ Մէլիք-Աթաբեկ և Մէլիք-Իսուրի հաճութեամբ ընդունեցին Գանձակ-խանի առաջարկութիւնը: Հաշտութեան զլխաւոր պայմանները դրանք էին, որ ֆանատիկանը տէր լինի Գեւորդի բերդին, առանց իրաւունք ունենալու միջոցով մէկըների երկրի և հպատակների գործելու մէջ. եթէ հարկները լինի պատերազմ արտաքին թշնամիների հետ, պէտք է վճարի ընդհանուր համաձայնութեամբ: Փանատիկանը ինքնագրելու ոչ ոքի հետ պատերազմելու իրաւունք չէր պիտի ունենայ. հայոց մէկըների երկրներից հաւաքված հարկերը պէտք է գործ դրվեին տեղային պէտքերի համար. ֆանատիկանը Ղարաբաղի մէջ նոր նուաճութեան անելու համարձակութիւն չի պիտի ունենայ և այլն:

Փանատիկանը քանի կեղեկալի էր, պահանջեց խաղաղութեան այդ պայմանները: Նրա մանր յետոյ որդին, Իրաւա-խանը, թէն առաջնական հետեւեց հօր օրինակին, բայց յետոյ ոչնչացրեց հօր դաշնակցութիւնը և հանդամանքները փոխվեցան...

Աւելորդ չէր լինի մի քանի խօսք ասել ֆանատիկանի մահաւան մասին:

Մենք տեսնեցինք, որ Եւրոպայի օվար Գալի-խանը, միանալով հայոց մէկըներին հետ, պատերազմեց ֆանատիկանի հետ, և նրան յաղթելով, որդուն, Իրաւա-խանին, իբրեւ պատանդ տարաւ Պարսկաստան: Այդ Գալի-խանը յետոյ Պարսկաստանում պատերազմ ունեցաւ Ասկար-խանի հետ (որը գեղեցիկ-խանի կողային էր) և սպանեց նրան: Երբ Բերդ-խանը դուրսացաւ և Պարսկաստանում շատ նուաճութեան կատարեց, կամեցաւ պատմել Գալի-խանին իր կողմը պահանջաւ համար: Երբագից դառնով պաշարեց նա Գալի-խանին Ուրմի բերդը (1762) և նրան կաշառեւորելով, տարաւ Շիրազ: Այդ ժամանակ Գե-

րիմ-խանը աղաւթեց ֆանատիկանի որդի Իրաւա-խանին, որը Ուրմի բերդում պահված էր, նրան ևս իր հետ Շիրազ տարաւ:

Փանատիկանը լսելով այդ դէպքը, մեծ ընծանելով դնաց Պարսկաստան Գերիմ-խանի մօտ, իր որդուն ստանալու դիտաւորութեամբ: Երկու տարի մնաց Շիրազում, վերջը տեսնելով, որ ոչ իրան են բաց թողնում և ոչ որդուն են տալիս, իր յատուկ խորամանկութեամբ հնարեց մի խաղ, որ գտնէ իր անձը կարողանայ ազատել: Որովհետեւ Գերիմ-խանը, որ այդ ժամանակ իրան ամբողջ Պարսկաստանի թագաւոր էր համարում, երկրի խաղաղութիւնը պահպանելու համար, չէր ցանկանում Ղարաբաղի խռովարարին կրկին բաց թողնել իր հայրենիքը: Փանատիկանը իրան հեռացրեց մեռած և զրկեցաւ քաղաքի մէջ: Նրա մարդիկը, դիմելով Գերիմ-խանին, խնդրեցին, որ թող տայ կատարելու հանգուցեալի կտակը, նրա մարմինը տանելով իր հայրենիքը, այնտեղ թաղելու համար: Գերիմ-խանը հասկացաւ խորամանկութիւնը: Եւ նրան պէտք է պատուով յուղարկաւ Կարախան: ասաց նա. Նրա մարմինը ճանապարհին կը հօտի. հարկաւոր է դուռնի նրան...:

Գերիմ-խանի հրամանով գանձեցին զուրկ թաւիցին կենդանի հանգուցեալի փորձերը, որպէս անում են դիմելները զմեռելու համար, յետոյ յանձնեցին նրա մարդիկներին, ասելով, թէ հիմա կարող էք տանել: Նրա մարմինը բերկեցաւ Ղարաբաղ:

Այս մահով մեռաւ ֆանատիկանը (1763): Այդ նուաճութեան Գերիմ-խանը մտածելով, որ որդին տալիս հաւատարմութեամբ կը ծառայէ Պարսկաստանին քան թէ խորամանկ հայոց, նրան խանութեան ատոման հնարեց և ուղարկեց Ղարաբաղ: Իրաւա-խանը դարձաւ Իրաւա-խան և յաջորդեց հօրը: աս ընտանիքի յայտնաւորումը ասում է իր մահով:

... (3-րդ մասի վրայ) դա (կը շարունակվի) (* Եւրոպայի որդիների փնտրումը և 3-րդ մասի վրայ) ասի փնտրումը և քանից որ խաղաղ դասն քն (1871) քանի յանձնար միասնական անհանգիստ դրամ:

*) Գանձակ-խանը Ուղուրու-խանի որդին էր:

ճունեութեան և մատուցած ծառայութիւններէ կարճ նկարագիրն էր:

Ալբրեխտ Գիւն-Գրեֆէ, երեւելի վերաբուժի որդին, գեւ. երեխայութեան ժամանակ մեծ ընդունակութիւններ ցոյց տուեց: 16 տարեկան հասակում նա մտաւ Բերլինի համալսարանի բժշկական բաժնի, իսկ 19 տարեկան հասակում ստացաւ բժշկականութեան գոհաւորի աստիճան: Բացի բժշկականութիւնէն նա ուսումնասիրում էր նոյնպէս և մաթեմատիկական գիտութիւններ:

Համալսարանի մէջ ուսումը աւարտելուց յետոյ նա մի քանի տարի այցելում էր զանազան կլինիկաներ, որտեղ նա պարագայում էր իր մասնագիտութեամբ, օֆտալմոլոգիայով: Նա առաջին անգամ ընդունեց այդ ուղղութիւնը Պրագայի մէջ, որտեղ այն ժամանակ դասախօսում էր Արլտ, որ ղեկավարում էր Գրեֆէի առաջին քայլերը: 1852 թուականին Բերլինի մէջ մշտական բնակութիւն հաստատելուց յետոյ նա ամենակարճ ժամանակում ահագին պրակտիկա գտաւ: Գրեֆէ գեւ. 23 տարեկան չէր, երբ հրատարակեց իր հիտախուզութիւնը աչքերի յայտնի հիւանդութիւնների բժշկութեան մասին, իսկ մի քանի ամիսը յետոյ նա գտաւ շրջութիւնը բժշկելու միջոցը:

Այդ ժամանակներում Հելմհոլցի նուիրեց բժշկականութեանը իր երեւելի գիւտը, աչքի հայելին, բժշկականութեան ամենաերեւելի գիւտերից մէկը: Երբ Գրեֆէ տեղեկացաւ այդ գիւտի մասին, նա բացականչեց, «Հելմհոլցի մեզ համար նոր աշխարհ դասաւ»: Գրեֆէ մեծ եռանդով սկսեց մշակել նոր գիւտը և մէկը միւսի ետեւից մի շարք երեւելի աշխատանքներ հրատարակեց: Աչքահիտախուզութեամբ աչքերի մի քանի հիւանդութիւնների բժշկելը, որ մինչև այն ժամանակ անբժշկելի էին, հազարաւոր աչքեր փրկեց և Գրեֆէ համաշխարհային հռչակ ստացաւ:

Գրեֆէ անընդհատ աշխատում էր և օրական միայն 20 րոպէ նուիրում էր իր համեստ ճաշին: Նա իր տանից դուրս հիւանդներին շատ քիչ էր այցելում և օրվայ մեծ մասը իր տանը նուիրում էր գիտաւարտական խեղճ հիւանդներին, որոնք Եւրոպայի բոլոր կողմերից գալիս էին նրանից բժշկվելու համար:

Նրան սիրում էին իր բոլոր հիւանդները, որովհետեւ չափազանց բարի և համբերող էր: Ցարաբաղդաբար բնութիւնը Գրեֆէին վատ առողջութիւն էր տուել, որ նա մի և նոյն ժամանակ չէր էլ խնայում: Գրեֆէ տեսնեց, որ շուտ յայտնվեցան: 30 տարեկան հասակում նա արդէն արիւն էր թցում և, չը նայելով իր բարեկամ և բժիշկ Տրաուբէի խորհուրդներին, դրա վրա ուղարկութիւն չէր դարձնում: 1861 թուականին նա ամուսնացաւ կոմսուհի Կնուսի հետ և հարսանիքից առաջ վատնաւոր կերպով հիւանդացաւ: Նրան ստիպեցին գնալ Նիւցա: Հենց որ նա մի փոքր առողջացաւ, նորից ձեռնարկեց իր պրոֆեսորական և գիտական աշխատանքներին: Այդ ժամանակից նրա առողջութիւնը այլ ևս չը լաւացաւ: Վերջին ժամանակներում երկու ծառաներ նրան բռնում էին, երբ նա բժշկում էր իր հիւանդներին: Նա շատ լաւ գիտէր իր դրութիւնը և ասում էր, որ ամեն րոպէ մահուան է սպասում: Գրեֆէ վախճանվեցաւ 1870 թուականի յուլիսի 20-ին, 42 տարեկան հասակում:

Պրոֆեսոր Շվեյցերի ճառի վերջնապէս յետոյ ներկայ եղողները ուղեւորեցան համալսարանից այնտեղ, ուր դրված էր արձանը: Հանդիսաւոր գնացքը հետեւեալ կեր-

պով էր կազմված. առաջ գնում էր ուսանողական պատգամաւորութիւնը, յետոյ պատկայ մասնագիտութիւնը, համալսարանի մէջ ներկայ եղողները, դարձեալ ուսանողներ, զանազան գիտական ընկերութիւնների և քաղաքների ներկայացուցիչներ: Հազարաւոր մարդիկ լցրել էին փողոցները: Երաժշտական մի քանի խումբեր անդադար ածում էին:

Երբ ներկայ եղողները շրջապատեցին արձանը, վարագոյրը ընկաւ և բացվեցաւ: Գրեֆէ արձանը, որ իր երկու կողմերը թեւեր ունէր, որոնց վրա դանազան գիւղերով կանգնած էին հիւանդներ, որոնք օպերացիայից յետոյ նոր լոյս էին տեսնել:

Պրոֆեսոր Կանգելեի կանգնեց արձանի մօտ և մի կարճ ճառով պատմեց արձանի կառուցման պատմութիւնը և արձանը յանձնեց Բերլին քաղաքին: Ֆրանկլեի Հոթ-Հալալութիւն յայտնեց քաղաքի կողմից, որ մեծ յարգանքով ընդունում է այն մարդու արձանի պահպանելը, որի յիշատակը երկար ժամանակ կը մնայ Բերլինի երախտագէտ ազգայնականութեան մօտը մէջ:

Ծերունի Արլտ, որ առաջ Գրեֆէի ուսուցիչ էր, իսկ յետոյ նրա աշակերտ, մի զգացմունքով լի ճառ արտասանեց, որի մէջ անցկացրեց այն միտքը, որ Գրեֆէն պատկերաբան է ոչ թէ իբրեւ գիտնական, այլ իբրեւ մարդ, որի գործունեութիւնը մարդկութեան բարօրութեան էր նուիրված:

Վերջին խօսքը արտասանեց ուսանողների ներկայացուցիչ Աշեր: Պատանդները, ասեց նա, պատում են Գրեֆէին ոչ թէ իբրեւ պրոֆեսորի, այլ իբրեւ ուսուցչի և բարեկամի: Այն ամբողջ հոգեւոր և բարոյական կապը, որ Գրեֆէին կենդանի ժամանակ միացնում էր ուսանողների հետ, չէ ոչնչացւում: Նրա մահով և եթէ Աստուած կամեցաւ իր մօտ կանչել Գրեֆէին, նա անկասկած իր մօտ կանչել Գրեֆէին, նա անկասկած իր մօտ կանչել Գրեֆէին: Երիտասարդ ուսանողի համակրելի և մտածված ճառը ողևորված ծափահարութիւններով ընդունվեցաւ և պրոֆեսոր Վերլիսով առաջինը սեղանից նրա ձեռքը:

Այդպէս վերջացաւ Գրեֆէի արձանի բացման հանդէսը:

Բաղդաւոր է այն երկիրը, որի կենսիկ խաղաղ ընթացքը թոյլ է տալիս զբաղվել այդպիսի տօնախմբութիւններով: Կրկնակի բաղդաւոր է այն երկիրը, որտեղ երիտասարդութիւնը ստանում է իր արժանի յարգանքը, որտեղ երիտասարդութեանը և վերաւորում գնահատան կասկածանքներով, որտեղ չեն ասհմանափակում նրա ձգտումները գեղի գիտութիւնը, որտեղ երիտասարդութիւնը համարվում է ներկայի յոյս և ապագայի փառք և ոյժ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հետաքրքիր հայտնություն է որ Հայդելբերգի և Մանհայմի մէջ պատահեց մի մեծ գեղազուտութիւն: Երկաթուղու երկու գնացքներ միմեանց չվիզելով դիմելով ժամը 12-ին, վազմանքից մի քանիսն կտոր կտոր եղան: Ան ապմ յայտնի է որ ճաղարհորդներից 8 հոգի սպանվեցան, 20 հոգի ծանր կերպով վիրավորվեցան, իսկ թեթեւ կերպով վիրավորվածներ բազմաթիւ են:

—Գեւ. և Միլանի և Լիւցերնի ժողովուրդները չեն վերջացրել Սէն-Գոտարդի երկաթուղու բացվելու պատճառով իրանց ուղևորութիւնները, և ահա «Gaulois» լրագիրը «գիտութեան և աշխատանքի այդ տօնախմբութեան» մէջ նկատեց սպառնալիք Ֆրանկային: Սէն-Գոտարդիան տունէն էր ասում է լրագիրը, միայն առևտրական կետից նայելով, սպառնում է մեր առևտրին, մեր նաւահանգիստներին, մեր երկաթուղիներին անաղին ցանցին, և

վերջ ի վերջոյ, կը վնասի մեր ազգային շահերին: Ամբողջ արանդիտը Հնդկաստանից և մերձաւոր արեւելքից կանցի: Ֆրանկայի մօտով, որովհետեւ սէն-գոտարդիան գիծը Եւրոպայի հիւսիսի և հարաւի մէջ եղած ամենակարճ ճանապարհն է: Այժմ, երբ խաղաղ անմիջապէս միացած է Գերմանիայի հետ, ֆրանսիական ճանապարհների գործակցութիւնը, որոնք մի ժամանակ անհրաժեշտ էին, այժմ աւելորդ է դառնում: Երեք պետութիւններ օգուտ ունեն ընդհանրակցել գործերի այդպիսի դրութեանը: Անգլիան, Բելգիան և Ֆրանսիան: Լրագիրը այդ սպառնացող վտանգից ազատվելու համար խորհուրդ է տալիս անմիջապէս միացնել Ֆրանսիան և Անգլիան Լամանչի միջով ստեղծելով կամ մի ուրիշ շինութեան միջոցով:

—«Daily News» լրագիրն Ալաբամայից հեռագրում են, մայիսի 13-ից, որ երկու Ֆէյսալ կղզու վրա, որ պատկանում է Ալգորիան կղզիների խմբին, սարսափելի երկրաշարժ էր: Հարուածները մի ժամ շարունակվում էին և այնքան զօրեղ էին, որ շատ եկեղեցիներ, հասարակական շինութիւններ և մասնաւոր տներ հիմքից քանդվեցան:

—«Presse» լրագիրն անեկուլթիւնների համամաստ, գէներալ յաբրուսիս գրաւելը և Սերբիայում չէրոգորիական 60 կամաւորների կաշնաւորումը, որոնք նշանակված էին Սերբիայի համար, Բելգրադէ մօտով մէջ տար վրձարանութիւնների առիթ էրան: Ֆետաղէմ և արմատական լրագիրները պահարկում են կառավարութեանը նրա անհերքելի դաւաճանութեան համար սերբիական մեծ գործին: Այդ լրագիրները խօսքերով Բոսնիան ամենեւին չէ կազմում Աւստրո-Ունգարական միապետութեան մասը, և այդ պատճառով ամեն տեսակ աղիտացիա այնտեղ ներելի է: «Վիդել» լրագիրը, որ կառավարչական կուսակցութեան օրգան է, պատասխանում է ասելով որ Աւստրիան դրանց Բոսնիան այն լրագրութեան հիման վրա, որի տակ գտնվում է և Բոսնիան: Նի ստորագրութիւնը: Ապա լրագիրը մեծ համարձակութեամբ ճանդէն է գալիս «Մոսկովյի սլաւփրանսֆիլ կուսակցութեան» պատկանող անձանց դէմ, որոնք գեւ. ևս կարծում են, թէ Սերբիան իրանց քաղաքական հնարաղիտութիւններ մէկ գաւառ է ներկայացնում: Լրագիրը ասում է, որ այդ ժամանակները արդէն վաղուց անցել են և որ Բոսնիան միայն զամ ընդ միշտ պէտք է հասկանան հետեւալը: 1) որ սերբերը իրանք իրանց տէր են և կամենում են այդպէս մնալ, 2) որ Սերբիան նախ և առաջ խաղաղութեան և ճանգարանութեան պէտք ունի:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պապական ընդունելութիւններ: Լեւոն XIII պապը ուխտաւորներին և եկեղեցու այլ բարեկամներին ընդունելու համար նոր ձև մտցրեց: Մեծ ընդունելութիւնները, որ մինչև այժմ կատարվում էին շարքեր երկու անգամ, յոգնեցնում էին սուր հօրը, որովհետեւ նա իր բոլոր ժամանակը նուիրում է պետական և եկեղեցական գործերին և անձամբ գեղեկավորում է վարդապետ ընդունելու գործերը: Այդ հանգամանքը յաճախ պատճառ էր դառնում, որ մասնաւոր ընդունելութիւնը մերժվում էր, և այդ բանը մեծ վնաս էր տալիս սուրբ Պետրոսի լուսնային: Այժմ ընկիտող ուխտաւորները, որոնց չէր ընդունում պապը, տուն էին վերադառնում առանց պապին տեսնելու. բայց այդ անքան վնասակար չէր եկեղեցու շահերին. անախորժ էր այն բանը, որ այդ ուխտաւորները յետ էին տանում իրանց պատրաստած լուսնային սուրբ Պետրոսին նուիրելու համար: Օրինակ, նորեւում մէկ տիկին, բարկաւալով, որ իրան չընդունեցին, յետ տարաւ իր հարկերը 50,000 ֆրանկ դրամը: Այդ անպարտաւորութիւնները ոչնչացնելու համար, շահասեր պապը սկսեց պատարագ մատուցանել ոչ թէ տընային եկեղեցում, այլ կօսիստօրիայի դահլիճում, օտարականների ներկայութեամբ, որոնք յօժարութեամբ տեսնում են պապի պատարագը: Այդ միջոցով պապը բաւականացնում է հաւատացեալներին առաւել, քան հասարակ ընդունելութեամբ: Միջոց է տալիս նրանց յանձնել իրան սուրբ Պետրոսի լուսնային, իսկ ինքն ազատվում է հարկաւոր անմասնութեան անձանց: Տես յոյնեցուցիչ խօսակցութեան պարտաւորութեանց:

Տարօրինակ փոխութիւն: Բրիտանական

արիւստօրիտայի մէջ գիտութեանը ծառայող բաւական շատ մարդիկ կան. այդպիսիների թւում են մարկիզ Վորչեստեր, Բորդոս Բոյլ, Երդ Բոսս և ուրիշները. բայց դրանցից և ոչ մէկը գիտութեան այնքան ծառայութեան չարաւ, որպէս Հենրի Կալվինդը, անգլիացի հռչակաւոր քրիստոնէ, որը գտաւ թէ ջուրը բաղկացած է ջրածնից և թթւածնից և որը որոշեց երկրագնդի ամբողջութիւնը: Նա մտաւ Լոնդոնում 1810 թին: Հենրի Կալվինդը պատկանում էր Վելլինգթոնի արքունական ցեղին: Նրա հայրը շատ տարօրինակ մարդ էր, որովհետեւ իր որդուն իր հասարակական գրութեան վայել կրթութիւն տալու փոխանակ նա որդուն ակոսաւաների մօտ եղած սենեակները յատկացրեց, ուր երիտասարդ Հենրի անցրեց իր պատանեկական տարիները: Հաւանական է, որ երիտասարդ Կալվինդը ժառանգեց իր հօր տարօրինակ բնավորութիւնը, բայց անկասկած է, որ պատանեկութեան ժամանակ վարած կեանքի կաւանակն ևս մեծ ազդեցութիւն ունէր նրա տարօրինակ բնավորութեանը զարգացման վրա, որով վերջը հռչակվեցաւ: Լորդ Չարլզ Կալվինդը իր որդուն միայն տարեկան 500 ֆ. տարելից էր տալիս, բայց որովհետեւ Հենրին միայն գիտութեամբ էր պարագլուտ, այդ պատճառով վերալիչեալ դուստրը շատ և շատ բաւական էր իր պետքերը հոգալու համար: Վերջը նա հօրից 1,300,000 ֆ. տարելից փող ժառանգեց, բայց, չը նայելով այդպիսի հարստութեանը, նա համարեալ չը փոփոխեց իր կեանքի եղանակը, թէպէտ և ակոսաւանում չէր ապրում: Ամբողջապէս գիտական պարագլուտների մէջ խորատուզված, Հենրի Կալվինդը միշտ խորում էր մարդկանցի հասարակութիւնից: Նրա միակ հիւրը իր ազգական Երդ Չորջ Կալվինդն էր, նա ևս տարելից մէկ անգամ էր գալիս նրա մօտ և տարը իրօքից տակել չէր մնում քիմիկայի մօտ: Հռչակաւոր քրիստոնէի տան մէջ եղած կարգը դասական բնավորութիւն ունէր: Նա պատուիրում էր ճաշ, տոնակի վրա զրկելով կերակուրների անուշները և դնում էր դահլիճի մէջ զրած սեղանի վրա, որտեղից որոշեալ ժամին նրա ծառան վերցնում էր: Շարքեր երկու անգամ նա այցելում էր իր քաղաքային տունը, բայց երբեք ծառաներին հետ չէր խօսում. իսկ ազգայիները թաղվում էին լորդի այցելութեան ժամանակ. եթէ մի օր և է ազգային երեւոր լորդի աչքին, նրան իսկոյն արձակում էին: Նա միայն գիտական առարկաների վրա էր խօսում և այն էլ միայն իր մօտ բարեկամների հետ: Նա, բայց գիտական շրջաններից, հարաբարական մէջ երբեք չէր երևում: Նրա տուն վարկելու ձեռ յայտնի էր ամենքին և ամենքը միշտ խուսափում էին նրան պատահելուց: Նա փողին ոչինչ նշանակութիւն չէր տալիս: Մի անգամ եկաւ նրա մօտ նրա բանկիրը հարցնելու, թէ ինչպէս է կամենում տեղաւորել նորեւում ստացված 80,000 ֆ. տարելիցը: «Սեր, պատասխանեց փրկափան, դա ձեռ գործն է, մի անհանգստացնել ինձ»: Նրա մահը նոյնպէս օտարալի էր, ինչպէս և նրա ամբողջ կեանքը: Զգալով մահուան մերձեցումը, նա հրամայեց իր ծառային կէս ժամով հեռանալ և չը խանգարել իրան իր կեանքի վերջին րօպէսներում: Ծառան հաղադրվեցաւ, բայց անհանգստ լինելով իր տիրոջ կեանքի մասին, նա նշանակեալ ժամանակից վաղ մտաւ սենեակը: Կալվինդի գեւ. կենդանի էր: Նա խիստ կիրպով յայտնեց անանց ծառային նրա անհագնալիցութեան համար և հրամայեց նորից հաւանալ: Երբ ծառան վերադարձաւ, հռչակաւոր քրիստոնէ արդէն մեռած էր:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐ, 26 մայիսի. «Правит. Вѣстн.» լրագրի մէջ յայտնված է. Կոլպա-կովսկի նշանակված է Ստեպանի գլխավոր նախագահական, Չերնայեվ հաւրեւոտանի, Մեշչերնով Կազանի շրջանի գործերի հրամանատար, Բրուսեր իր խնդիրը համաձայն պահեստի գործերի մէջ է նշանակված: Ստեպան գլխավոր նախագահականութեանց և Տօբոլսկայա և Տօմսկայա նահանգներից կազմված է Օմսկի գլխավորական շրջան փոխանակ Արեմոնս-Սերբի:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԴՈՒՆԻ
ԽՈՒՐՈՒՄԻ ԿՈՊԵՆՀԱԳԵՆԻ
Տարօրինակ փոխութիւն: Բրիտանական

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ հրա-
ւիրում է ցանկացողներին կապալով վերց-
նել արելու և քարէ աշխատանքները հրդե-
հաշջ բաժնի սայլերի պահեստի և անո-
ւատներին: Աճուրդի համար պետք է ներ-
կայանալ քաղաքային վարչութեանը երեք-
շաբթի յունիսի 1-ին առաւօտեան 12 ժա-
մին: Հաշիւը, նախագիծը և պայմանները
կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն
օր առաւօտեան 10 ժամից մինչև 2 կէս-
օրից յետոյ:

2—3

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ
ՄԻՆՁԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 Կ. դիւժինը, ՄԻՐՆԵՐ 3
Կ. հարկը, սաւոյն 3 Կ. հաւար, արեւի
ժԱՄԱՑՈՑՆԵՐ 50 Կ., ՇԱՐԱՆԵՐ (նոր ու-
կուց) ժամացոյցի համար 50 Կ., կրաններ
10 Կ., ջրի ամաններ 30 Կ., կժեր 25 Կ.,
կասարաններ 4 Կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 Կ., ծը-
ծիչներ 1 Կ., հայելիներ 35 Կ., վարտի-
ներ 4 Կ., պիճախներ 6 Կ., ԱՄԲՈՂՋ ՀԱ-
ԳՈՒՍՏ 13 Կ., զլխարկներ 1 Կ., չը թրջվող
վերարկուներ 6 Կ., չէօտկա 90 Կ., ԱՍԵՂ-
ՆԵՐ 100 հաւար 8 Կ., կանանց և տղա-
մարդկանց ԳՈՒԼԱՆԵՐ 2 Կ. 50 Կ. դիւ-
ժինը, ՄԵՂԱՄՈՒՄ 32 Կ. անգլիական ֆուն-
տը, կանֆետներ 40 Կ. ֆունտը, ԿՐԱՊ,
տրիկո, ԱԼՔՈՄԵՆ, բրիտանական մետալի
առարկաներ և այլն ԿԻՍԼՈՒՎ, մոմեր,
մուրաբա և այլն շատ էփան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՅ:

40—50

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ որ աւարտել է Թիֆլիսի
ՈՒՍՈՒՑԱԿԱՆ Խնամատուի ուսման ընթաց-
քը, ցանկանում է Թիֆլիսի հայոց ուսում-
նարաններում ՈՒՍՈՒՑԻ պաշտօն ունենալ:
Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբա-
գրատան մէջ:

8—10

Մամուլի տակից դուրս եկաւ Տիգրան
Նազարեանի հրատարակութիւնների VII
համարը «ՂԸԼԸՑԵ ԿՆԱՆՈՑ ՊԵ-
ՆԸ-ՓԵՇԱԿԸ» Հեղ. Կոստանտին ՄԷ-
լիք-Նահապետեանի: Գրքոյը Վարաբազի
բարբառով է և այնտեղի կանանց կեան-
քից մի պատկեր է ներկայացնում:

Գինը 15 Կ. է

Հասցէ՝ Тифлисъ. Ред. „Меру“ Ти-
рану Назарьянцъ

1—6

ԹԻՖԼԻՍ-ՔԱԳՈՒՆ երկաթուղու նոր կառու-
ցած կայարանի մօտ Եսթիֆ Եսփօլեվիչ
ԻԼԵԱՇԵՎԻՉ ծախում է մօտ 3000 քառա-
կուսի սաժէն ՀՈՂ ամբողջութեամբ կամ
ՄԱՍԵՐՈՎ այն գներով, որոնցով անցել
տարի ծախված է երեք անձանց: Այդ հողի
մօտ այս տարվայ վերջը կանցնի ՁԻԱՔԱՐՇ
երկաթուղի: Երեւելիքի բնակարանը գտն-
վում է «Путей Сообщения» վարչու-
թեան մօտ, տուն Բարնովի № 9:

2—2 (ուրբ.)

ՀԱՅՏԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Հայոց ծխական ուսումնարաննե-
րում:

Մայիսի 18 և 19-ին Կաթող. ս. Գեորգ
եկեղ. ուսումն.
— — 20-ին Զորաբաշի ս. Գեորգ եկեղ.
ուսումն.
— — 22-ին Շամբորեցոյ եկեղ. ուսումն.
— — 24-ին ս. Մինաս եկեղ. «Իզմիրեան»
ուսումն.
— — 25 և 26-ին Կուկիւ ս. Աստուա-
ծածին եկեղ. ուսումն.
— — 27-ին ս. Կարապետ եկեղ. ուսումն.
— — 28 և 31-ին Աւետեաց եկեղ. տղ.
և օր. ուսումն.

Յունիսի 1, 2 և 3-ին Հաւար. Մարիամեան
օր. ուսումն.

— — 4 և 5-ին Թանդղեան օր. ուսումն.

Հարցաքննութիւնները կը սկսվեն առա-
ւօտեան 8 ժամին: Թեմական վերապետը
Գ. Բարխուդարեանց:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արժուոյն գալլերէում № 144 ԾԱՊՈՒՄ է արժան գներով վիճենայի

Տօնէա Փարբիկայի ամեն տեսակ ՄԵՐՔԵԼ, նոյնպէս Խաղիայի ՄԱՐՄԱՐԻՆՈՆ քարերը,

ՀԱՅԵԼԻՆԵՐԸ և ՇՐՁԱՆԱԿՆԵՐԸ:

48—60

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵԼԻՆ ԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ
լինելու է կիրակի, մայիսի 30-ին, առաւօտեան 11 ժամին, Արժուոյն թափառում:
Ընդհանուր ժողովի պարագանց առարկաները՝ 1) Խմբագրական մասնաժողովի
գեկուցումը իր գործունէութեան մասին:

2) Տարեկան հաշուի հաստատելը:

3) Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի առաջարկութիւնը կանոնադրու-
թեան մի քանի յօդուածների փոփոխութեան մասին:

4) Վարչութեան նախագահի, փոխնախագահի, քարտուղարի, գանձապահի և մի
անդամի ընտրութիւնը՝ պ. պ. Ա. Յովհաննիսեանի, Ն. Միկոյեանի, Մ. Թաւադեանի,
Ա. Քիչմիշեանի և տիկ. Կ. Եւանգուլեանի փոխարէն:

5) Խմբագրական մասնաժողովի հինգ անդամների ընտրութիւնը՝ օր. Ն. Տէր-Մար-
կոսեանի և պ. պ. Յ. Չիգրանեանի, Գ. Տէր-Աղէքսանդրեանի, Ա. Բարաբեանի և Ս. Պա-
լասանեանի փոխարէն:

ա) Ընկերութեան կանոնադրութեան 33 յօդուածի զօրութեամբ ընդհանուր ժողո-
վը կայացած է համապում երբ ներկայ եղող անդամների թիւը Թիֆլիսում գտնուող
անդամների թիւի 1/5-ից պակաս չէ:

բ) Փոփոխած կանոնադրութեան նախագիծը ընկերութեան անդամները կարող են
նախապէս ստանալ պ. Ծատուրեանի խնուրթում (պալատի փողոց, տուն Ծովրանեանի):

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵ-
ՆԵԱԿ, Գօթլիֆի պրոսպեկտի վրա,
տուն ճարտարագետ Բէլօրի Գրասնեակը
բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3
ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—
10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրե-
րից և մեծ տօներէից:

ՆԵՐՍԵՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ Զ. Դաստան աշա-
կերաներից մէկը կամենում է պատրաստել
ԱՇԱԿԵՐՏՆԵՐ և ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻՆԵՐ բոլոր հայ
գպրոցների ստորին և միջին դաստանց
համար: Կարելի է հարցնել նոյն գպրոցի
տեսչի օգնական Պ. Ամիրան Մանդինեանից
մինչև յունիսի 7-ը:

1—5

ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒՅԻ

ՕՐԻՈՐԴ ԽԻՉԵՆԵԼՆԵՑ

ՍՈԼՈՒԱԿՈՒՄ, Միկոյեանի տուն, Գաղաքային վարչութեան հանդէպ:

Ցանկացողները կարող են դիմել նրան ԱՄԵՆ ՕՐ, ժամը 2-ից, մինչև 5 ժամ
երեկոյեան:

1—10

ՎԼԻԻՉԱՐՈՎԻ և ԶԱԳՈՒՄԵՆՆՈՒ (նախկին Տէր-Ա/օպօվի) մասնաւոր
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ հիմնուց սկսել է ընդունել երեխաներին, որոնք կամ շատ
քիչ գիտեն կամ բոլորովին չը գիտեն ռուսերէն, այդ լեզուն գործնականապէս սովորեց-
նելու և սկզբնական կրթութիւն տալու համար: Սոյալի. Սաղօլայա փողոց № 38:

3—6

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat

1. Weihburggasse 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

ՄԻՋԻ ԲՈՂՈՅ, ԿԱԹՈԼԻԿԵԱԿԱՅ ԲՈՂՈՅԻ ԱՆԿԻՆ ՆՁ 13.

Աւելի էփան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՅԻ ՄԵՐՔԵԼ ամե-
նայն տեսակ, Ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՐՆԵՐ 8—30 Կ., չա-
մաւաններ 250—25 Կ., սակիցածներ 1. 30—12 Կ., սուռն դուկն եր ճա-
նապարհի 6—35 Կ., մարաններ (погребцы) 6—25 Կ., սաւօ վարն եր
60 Կ.—1.25 ֆունտը, կուխների պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով
ամաններ, ու մի վալն ի կն եր մրաւօրն եր 38 Կ.—75 Կ., հրացաններ
երկու լույսն 6—32 Կ., ու էվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30
Կ., պատրաններ (գուլաններ) ընկուղի, սիգար Ռէնգարդի Փարբիկից. պապի-
րոս և թամբաբու կուշնարովի գլիլի պապիւրով. 5.000 ՖՈՒՆՏ ԹԵՑ (չայ) եղ.
ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սուխար չայու և կաֆէի) էինէմի. կօֆէ էինէմի և
Միկոյեանի. Պետերբուրգու 40—1 Կ. 25 Կ. հայելիներ ամենայն տեսակ
28 Կ.—240 Կ., պրոբկայ գինէլածանների, հանքային և գարեջրի (ДЛЯ
зельтерскихъ водъ и пива) զոյթուկ (пучъ), պարտաներ սամովարի և
չայու, դանակ չանդալ գանդան Փարբիկաների 1 Կ. 20 Կ.—25 Կ. դուժինը.
գրչակութիւն 1 Կ. 80 Կ.—5—60 Կ. դանակ ջիւրի 1—60 Կ.—12 Կ., դա-
նակ հացի 20 Կ.—1 Կ., հատը, կուխների 1—40 մինչև 3—20 Կ. պրիբոր.
միս կարելու մաշինայ. Անգլիական ութներ, Բրիտանական չայիկներ, կաֆէի-
նիկներ ամենայն տեսակ, Չաղացներ կաֆէի համար, Ֆիլտր—Չուր մաքրելու,
կրակմալ կարթիկէն 18 Կ., վաքս Գրանսիայի ծակոյ, Թուղթ փռտի, կանկրա-
ներ, սուրբուչ, մառիա, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարտախաղի, թանաք,
թանաքամանների, պրեսպապիւնների, գրչակն սեղանի և չայու Ֆրաժէ, վարչակի
և բրիտանակի դուժինը 1—50 Կ. մինչև 12 Կ., և չայու 45 Կ.—5 Կ., չու-
միչէք 45 Կ.—5 Կ., շամադաններ ամեն տեսակ 25 Կ.—12 Կ. Չուխտ, պղ-
սապրկաններ վարչակու, Ռեզինի ԿԱԼՈՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կա-
նանց և մարդկեանց 15 Կ.—50 Կ. Չուխտ, շապիկներ, մարդկեանց գալուս-
տիկներ, գնտրիկներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրեկի և շաքի. սանդուղի շի-
մայու ոսկորէ, գուտապիւրովի և փայտէ, չոսականեր գլիլի շաքի, սապիկի, պղի և
կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատովի կօճի և շալէ (гарусъ) ֆէլ-
չատիէք մարդկեանց և կանանց, պորտմաններ, բիսաներ, պապիրոսի ամաններ
և մանր գորաներէինի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ.,
կտոր, հոտալէտ ջրեր, պղզար, Գլիցերին ջրի քացախ, հոտալէտ պարաշիններ
ԿԻԼԵՐԻ ԼԱՔՐՈՍՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերադառնալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ ՆԻԿՈԼՈՎ-
ՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի առ-
կուում № 13.

Օտարաբաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.

60—180

ՄԻՋԻ ԲՈՂՈՅ, ԿԱԹՈԼԻԿԵԱԿԱՅ ԲՈՂՈՅԻ ԱՆԿԻՆ ՆՁ 13.